ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հուլիսի 2026թ. թիվ 504-Ա

Ա.ԹՈՐՈՍՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին մասի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի և Արմինե Թորոսյանի միջև 2021 թվականի հուլիսի 20-ին կնքված աշխատանքային պայմանագրի 7.1 կետը և հաշվի առնելով ծանուցագիրը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Արմինե Մկրտչի Թորոսյանին 2026 թվականի հուլիսի 20-ից ազատել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արծնիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնից և լուծել նրա հետ 2021 թվականի հուլիսի 20-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արծնիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝

Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածով սահմանված կարգով Արմինե Թորոսյանի հետ կատարել վերջնահաշվարկ:

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետին՝

Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 4.3-րդ մասով սահմանված կարգով սույն որոշումը ստորագրվելուց հետո երեք օրվա ընթացքում ծանուցել հասցեատիրոջը պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ, էլեկտրոնային փոստի կամ ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-07-14 17:54:08 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. հուլիսի 14
ք.Վանաձոր